ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31*

ք. Երևան «05» «12» 2019թ.

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և, «Պահապան» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Վ. Մելիք-Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1294782 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր ութսուն երկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: :

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը և հավելվածները կազմված են 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Պահապան» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	Կոտայքի մարզ, գյուղ Առինջ Պ. Սնակի 6-րդ փող.7/1 կից
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 00882372
ՔԿ ծառայության Ա.Ղազարյան	Տնօրեն Վ.Մելիք-Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«05» «12» 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	18441100/512	Կիսաբրդե գլխարկ, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ գլխարկի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և գլխարկի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Գլխարկի գլխարկաբոլորքի վրա՝ առջևի կենտրոնական մասում ասեղնագործվում են կաղնու ոսկեգույն փռված տերևներ (Նկար՝ 4), իսկ գլխարկաբոլորքի և գագաթի կենտրոնական մասում ամրացվում է մեծ գլխարկանշան (Նկար՝ 1):	հատ	24999	49998	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ
2	18441100/513	Տոնական գլխարկ, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ գլխարկի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և գլխարկի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Գլխարկի գլխարկաբոլորքի վրա՝ առջևի կենտրոնական մասում ասեղնագործվում են կաղնու ոսկեգույն փռված տերևներ (Նկար՝ 4), իսկ գլխարկաբոլորքի և գագաթի կենտրոնական մասում ամրացվում է մեծ գլխարկանշան (Նկար՝ 1):	հատ	24999	49998	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ
3	18441100/514	Ականջակալներով ձմեռային գլխարկ՝ բնական կարակուլից,	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ գլխարկի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և գլխարկի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Գլխարկի	հատ	64998	129996	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ

		գեներալի		ճակատային մասում ամրացվում է փոքր գլխարկանշան (Նկար՝ 2): Հովարի կենտրոնական հատվածում ասեղնագործվում են կաղնու ոսկեգույն փռված տերևներ (Նկար՝ 4):							
4	18211100/510	Կիսաբրդյա կտորից ձմեռային վերարկու, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ հանդերձանքի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և հանդերձանքի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Վերարկուի վերին օձիքի վրան ասեղնագործված տերևներ (Նկար՝ 6): Գեներալի ուսադիրները տրվում են վերարկու հետ միասին:	հատ	94998	189996	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ
5	18231410/504	Տոնական կիտել և ազատթող փողքերով տաբատ, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ հանդերձանքի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և հանդերձանքի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Կիտելի թևքերին կարվում է կարմիր և ոսկեգույն մեկական նեղ (2մմ) ժապավեն և ոսկեգույն թելերով ասեղնագործված տերևներ (Նկար՝ 5), իսկ վերին օձիքին ասեղնագործված են տերևներ (Նկար՝ 6): Գեներալի ուսադիրները տրվում են կիտելի վրա կարված	լրակազմ	75000	150000	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ
6	18231410/505	Կիսաբրդյա կիտել և ազատթող փողքերով տաբատ, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ հանդերձանքի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և հանդերձանքի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Կիտելի վերին օձիքին ասեղնագործված են տերևներ (Նկար՝ 6): Գեներալի ուսադիրները տրվում են կիտելի վրա կարված:	լրակազմ	75000	150000	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ
7	18231910/503	Կիսաբրդյա բաճկոն և ազատթող փողքերով տաբատ, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ հանդերձանքի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և հանդերձանքի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Բաճկոնի օձիքին	լրակազմ	45000	90000	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ

				ասեղնագործված են տերևներ (Նկար 6): Գեներալի ուսադիրները տրվում են բաճկոնի հետ միասին:						
8	18221600/513	Դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված անջրանցիկ կտորից, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ հանդերձանքի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և հանդերձանքի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Գեներալի ուսադիրները տրվում են բաճկոնի հետ միասին:	հատ	34998	69996	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ
9	18221600/514	Զմեռային դաշտային կոստյում հանովի մորթե օձիքով և կայծակաճար մանդով քողարկված գլխանոցով, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ հանդերձանքի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և հանդերձանքի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Գեներալի ուսադիրները տրվում են բաճկոնի հետ միասին:	հատ	69999	139998	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ
10	18331200/508	Տոնական վերնաշապիկ, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ հանդերձանքի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և հանդերձանքի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Գեներալի ուսադիրները տրվում են վերնաշապիկի հետ միասին:	հատ	23400	46800	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ
11	18331200/509	Երկարաթև վերնաշապիկ, գեներալի	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ հանդերձանքի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և հանդերձանքի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Գեներալի ուսադիրները տրվում են վերնաշապիկի հետ միասին:	հատ	15000	30000	2	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	2	2019թ. 4-րդ եռամսյակ
12	18341100/507	Շապիկ, գեներալի, գործվածք	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Վաճառողի կողմից կատարվում է չափագրում և անհատական կար՝ հանդերձանքի նկարագրությունը համաձայն ՀՀ Կառավարության 20.06.2019 թ. թիվ 776-Լ որոշման: Օգտագործվող կտորները, նյութերը և	հատ	15000	60000	4	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	4	2019թ. 4-րդ եռամսյակ

				հանդերձանքի ձևը նախօրոք համաձայնեցվում են Գնորդի հետ: Գեներալի ուսադիրները տրվում են շապիկի հետ միասին:							
13	18211100/511	Ձմեռային կիսավերարկու, սև	«Պահապան» ՍՊԸ ՀՀ	Կիսավերարկուն սև կտորից է՝ խտությունը՝ 210-230 գրամ մ2: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, ծալովի օձիքից՝ հանվող սև մորթուց, հետնամասում՝ կայծակաճարմանդով փակվող ներկարված գրպանից (որի մեջ տեղադրվում է անձրևանոցը (թիկնոցը)), առջևի ներքևի փեշերին՝ վրադիր և միջնադիր գրպաններից, կրծքամասում թաքնված՝ ներկարված գրպաններից: Կոճկվում է կափույրով ծածկվող կայծակաճարմանդով: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում՝ ծոցագրպան: Թիկունքի եզրակարի վերևի մասում կարվում է «ՔԿԾ» նշագրմամբ թիկունքանշան: Կրծքամասում՝ ձախ հատվածի վերևի մասում, ամրացվում է «ՔԿԾ» բառը, իսկ աջ մասում կարվում է կպչունակ՝ ծառայողի արյան կարգը նշելու համար: Ուսադիրների շրջանում՝ կպչունակով ամրակներ և նույն կտորից ուսադիրներ: Քրեակատարողական ծառայության խորհրդանշանը Վաճառողի կողմից կարվում է կիսավերարկուի ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև:	հատ	8117,6	137999,2	17	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	17	2019թ. 4-րդ եռամսյակ

<u>Ընդհանուր պայմաններ՝</u>

1. Քրեակատարողական ծառայության խորհրդանշանը կիսաձվաձև է, բարձրությունը՝ 100 մմ, լայնությունը՝ 78 մմ, Վաճառողի կողմից կարվում է ձմեռային կիսաբրդյա վերարկուների, կիսաբրդյա կիտելների, կիսբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, տոնական վերնաշապիկների, վերնաշապիկների և շապիկների ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև: Խորհրդանշանի վրա պատկերված են ոսկեգույն վահան, թուր, Հայաստանի Հանրապետության զինանշանը, դրոշը և կշեռք: Վահանի վերևում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» (Նկար 7):

2. Գեներալների ձմեռային կիսաբրդյա վերարկուների, կիսաբրդյա կիտելների, կիսբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, տոնական վերնաշապիկների, վերնաշապիկների և շապիկներիաջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, Վաճառողի կողմից կարվում է նաև 100 մմ բարձրությամբ և 78 մմ լայնությամբ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը (Նկար 8):

3. Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Քրեակատարողական ծառայության խորհրդանշանների, թևքանշանների, գլխարկանշանների, օձիքի վրա տեղադրվող տարբերանշանների նկարները՝

Նկար 1.	Նկար 2.	Նկար 3.	Նկար 4.	Նկար 5.	Նկար 6.	Նկար 7.	Նկար 8.
							

Գլխարկանշանները պատրաստվում են ոսկեգույն մետաղից կամ կանաչ պլաստմասսայից: Վերջինը նախատեսված է դաշտային համազգեստի համար (Նկար 3):

Քրեակատարողական ծառայողների մեծ գլխարկանշանի բարձրությունը 6.5 սմ է, լայնությունը՝ 5.6 սմ (Նկար 1): Պատկերում է քրեակատարողական ծառայության երիզված խորհրդանշանը, ամրացվում է կիսաբրդյա գլխարկի վրա: Փոքր գլխարկանշանի բարձրությունը 4.0 սմ է, լայնությունը՝ 3.5 սմ, պատկերում է քրեակատարողական ծառայության երիզված խորհրդանշանը (Նկար 2), ամրացվում է ականջակալներով ձմեռային գլխարկի և կեպիի վրա:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ
Կոտայքի մարզ, գյուղ Առինջ Պ. Սնակի 6-րդ
փող.7/1 կից
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 00882372

Տնօրեն Վ.Մելիք-Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
1	18441100/512	Կիսաբրդե գլխարկ, գեներալի	-	-	-	49998	49998
2	18441100/513	Տոնական գլխարկ, գեներալի	-	-	-	49998	49998
3	18441100/514	Ականջակալներով ձմեռային գլխարկ՝ բնական կարակուլից, գեներալի	-	-	-	129996	129996
4	18211100/510	Կիսաբրդյա կտորից ձմեռային վերարկու, գեներալի	-	-	-	189996	189996
5	18231410/504	Տոնական կիտել և ազատթող փողքերով տաբատ, գեներալի	-	-	-	150000	150000
6	18231410/505	Կիսաբրդյա կիտել և ազատթող փողքերով տաբատ, գեներալի	-	-	-	150000	150000
7	18231910/503	Կիսաբրդյա բաճկոն և ազատթող փողքերով տաբատ, գեներալի	-	-	-	90000	90000
8	18221600/513	Դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված անջրանցիկ կտորից, գեներալի	-	-	-	69996	69996
9	18221600/514	Ձմեռային դաշտային կոստյում հանովի մորթե օձիքով և կայծակաճարմանդով քողարկված գլխանոցով, գեներալի	-	-	-	139998	139998

10	18331200/508	Տոնական վերնաշապիկ, գեներալի	-	-	-	46800	46800
11	18331200/509	Երկարաթև վերնաշապիկ, գեներալի	-	-	-	30000	30000
12	18341100/507	Շապիկ, գեներալի, գործվածք	-	-	-	60000	60000
13	18211100/511	Զմեռային կիսավերարկու, սև	-	-	-	138000	138000
							1294782

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Պահապան» ՍՊԸ
Կոտայքի մարզ, գյուղ Առինջ Պ. Սևակի 6-րդ
փող.7/1 կից
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500198133700
ՀՎՀՀ 00882372
Տնօրեն Վ.Մելիք-Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«05» «12» 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«05» «12» 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ *ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31*
Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2019թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ապրանքները՝

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն